ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 օգոստոսի 1998 թվականի №37
քաղ. Երևան

ՀՀ էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված և ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի կողմից գրանցման ենթակա պայմանագրերի ցանկը հաստատելու մասին

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը, ղեկավարվելով «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի հոդված 20-ի «դ» կետով, ի լրումն 1997թ. նոյեմբերի 20-ի թիվ 17 որոշման՝ «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների միջև կնքվող պայմանագրերի գրանցման մասին», **որոշում է՝**

Հաստատել ՀՀ էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված և ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի կողմից գրանցման ենթակա պայմանագրերի ցանկը (հավելված):

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
նախագահ՝ **Վ.Մովսեսյան**